**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Ծաղկաձորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար համայնքի բակային տարածքների կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի ապրիլի 9-ին կնքված N ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/4 պայմանագրում 2019 թվականի սեպտեմբերի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը /կցվում է/:

Փոփոխության առաջացման պատճառ – Անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ աշխատանքներ, որի համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն – Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրի հավելված թիվ 1 Ծավալաթերթ-նախահաշվում կատարել փոփոխություններ՝ պայմանագրի գինը սահմանելով 14179000 /տասնչորս միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար/ ՀՀ դրամ՝ ավելացնելով 1289000 /մեկ միլիոն երկու հարյուր ութսունինը հազար/ ՀՀ դրամ:

Փոփոխության հիմնավորում - ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 56-րդ կետի 2-րդ ենթակետ և Պայմանագրի 8.5 կետ:

*Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/4 ծածկագրով գնումների համակարգող՝ Արփինե Ավետիսյանին:*

*Հեռախոս՝ 0223-6-04-02:*

*Էլ. փոստ՝ tsaghkadzor.kotayq@mta.gov.am*

*Պատվիրատու՝ Ծաղկաձորի համայնքապետարան*